

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵՄԱՆԿՑՈՒՆՆԵՐԸ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 07.11.25, ուղարկվել է գրախոսման՝ 11.11.25, երաշխավորվել է տպագրության՝ 24.12.25

Ներածություն: Արհեստական բանականությունը (ԱԲ) վերջին տարիներին դարձել է աշխատատեղերի, թվային փոխակերպման և ավտոմատացման կարևոր գործոններից մեկը՝ ծայր տալով նաև իրավական և սոցիալական մարտահրավերների. փոխում է տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեխանիզմները, առաջացնում է ալգորիթմական կողմնակալության և աշխատողների իրավունքների խախտման ռիսկեր, պահանջ առաջադրելով վերանայել ավանդական աշխատանքի կազմակերպման մոտեցումները: Այս համատեքստում կարևոր է և՛ միջազգային և՛ ազգային մակարդակներում մարդակենտրոն մոտեցումների մշակումը, որոնք ապահովում են ԱԲ պատասխանատու և հաշվետվողական օգտագործումը՝ միաժամանակ պաշտպանելով մարդու հիմնարար իրավունքները և սոցիալական ապահովությունը:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ԱԲ կիրառման իրավական և քաղաքական մարտահրավերները՝ *խնդիր ունենալով* վեր հանել ԱԲ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում առաջացած իրավական ռիսկերը՝ տվյալների մշակման, ալգորիթմների թափանցիկության և աշխատողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև ԱԲ պատասխանատու և հաշվետվողական կիրառման ապահովման նպատակով դիտարկել միջազգային և ազգային մակարդակներում մշակված մարդակենտրոն իրավական և քաղաքական մոտեցումները:

Գրականության վերլուծություն: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ԱԲ ունի նշանակալից ներուժ տնտեսական աճի և արտադրողականության բարձրացման համար, սակայն իրավական հստակ կարգավորման բացակայության պայմաններում այն կարող է խորացնել սոցիալական անհավասարությունները, խախտել աշխատողների իրավունքները և մեծացնել ալգորիթմական կողմնակալության ռիսկերը, որը պահանջում է ոչ միայն ազգային, այլև միջազգային իրավական կարգավորումների մշակում: Երկրների մեծ մասը չի ձգտում իրավական սահմանման մեջ առանձնացնել արհեստական բանականության կողմից ստեղծված վերջնական արդյունքը, այլ նկարագրում է նպատակին հասնելու գործընթացը՝ օգտագործելով մարդու ուղեղին բնորոշ մտածողության եղանակն ու սկզբունքները: Մի շարք երկրներում

արհեստական բանականության օրենսդրական ամրագրված սահմանում չկա, ինչը դժվարություններ է ստեղծում հանրային և իրավական կարգավորման ոլորտներում¹: ԱԲ ծրագրային ապահովման և մեթոդների ամբողջություն է, որն ինքնին ոչ պատասխանատու է, ոչ էլ անպատասխանատու: Պատասխանատու պետք է լինեն արհեստական բանականության հետևում կանգնած կազմակերպությունը, գործընթացները և մարդիկ (հասարակությունը): ԱԲ իրավական կարգավորման ոլորտում INRIA ազգային հետազոտական ինստիտուտը նշում է «արհեստական բանականության տեխնոլոգիայի հետ կապված վարչական վերահսկողության գործառնությունների հստակեցման անհրաժեշտությունը»²: Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը խորը վերլուծություն է անցկացնում ռոբոտաշինության և արհեստական բանականության առանձին կարգավորման համար անհրաժեշտ գործիքների ձևավորման վերաբերյալ³: Այս համատեքստում հետազոտողները առաջարկում են երկու հիմնական մոտեցում՝ շրջանակային-կոնվենցիաների և հայեցակարգային⁴: Միջազգային մակարդակով ԱԲ կարգավորման ոլորտում կարևոր քայլ էր 2024 թվականին Եվրախորհրդի կողմից «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վերաբերյալ» շրջանակային կոնվենցիայի ընդունումը նպատակ ունենալով ապահովել մարդու իրավունքների, գերակայության և ժողովրդավարական իրավական չափորոշիչների պահպանությունը ԱԲ համակարգերի օգտագործման ընթացքում⁵: ԱԲ կիրառման ընթացքում ի հայտ եկող ռիսկի բարձր հավանականությունը պահանջում է մասնագետների վերահսկողություն և մշտադիտարկում ԱԲ իրականացվող գործընթացների նկատմամբ հասարակությանը պաշտպանելու մարդկանց չարաշահումներից կամ մեքենաների սխալ ուսուցումից⁶: Միայն արդյունավետ իրավական

¹Atabekov, Atabek. (2023). Artificial Intelligence in Contemporary Societies: Legal Status and Definition, Implementation in Public Sector across Various Countries. Social Sciences 12: 178. <https://doi.org/10.3390/socsci12030178>

² INRIA. 2021. Why Must We Make AI More Responsible?, <https://www.inria.fr/en/artificial-intelligence-responsible-ethical-regulation>

³ Huq, Aziz, and Mariano Florentino Cuéllar. 2022. Artificially Intelligent Regulation. Daedalus 151: 330.

⁴ Leslie, D., Burr, C., Aitken, M., Cowls, J., Katell, M., & Briggs, M. (2021). *Artificial intelligence, human rights, democracy, and the rule of law: A primer*. SSRN Electronic Journal. <https://doi.org/10.2139/ssrn.3817999>

⁵ Moise, A. (2025). Aspects regarding the Regulation of the Artificial Intelligence at the European Level. *Bulletin of the Transilvania University of Braşov. Series VII: Social Sciences Law*. <https://doi.org/10.31926/but.ssl.2025.18.67.1.25>.

⁶Cath C. Governing artificial intelligence: Ethical, legal and technical opportunities and challenges

Philosophical Transactions of the Royal Society a: Mathematical, Physical & Engineering Sciences, 376 (2133) (2018), pp. 1-8, [10.1098/rsta.2018.0080](https://doi.org/10.1098/rsta.2018.0080)

կառավարմամբ է հնարավոր մեղմել ԱԲ-ի օգտագործմամբ պայմանավորված ռիսկերը և հաղթահարել առաջացող մարտահրավերները⁷:

Մեթոդաբանություն: Հետազոտության շրջանակներում ԱԲ-ի կիրառման տնտեսական և իրավական ազդեցության բնույթը գնահատելու համար իրականացվել է նորմատիվ փաստաթղթերի, իրավական ակտերի և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, OECD, ՅՈՒՆԵՍԿՕ, G7) զեկույցների, հրապարակումների համառոտ և կառուցվածքային վերլուծություն:

Վերլուծություն: ԱԲ օգտագործումը դարձել է գործունեության գրեթե բոլոր ոլորտների անբաժանելի մաս, սակայն դրա կարգավորիչ և էթիկական դիտարկումները մնում են մասնատված: Որպես նոր «երևույթ» անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալու ԱԲ տեխնոլոգիաների և դրանք կարգավորող իրավական շրջանակների միջև առկա բացին՝ ընդգծելով այնպիսի հիմնարար խնդիրներ, ինչպիսիք են ակտրիթմական կողմնակալությունը, տվյալների գաղտնիությունը և պատասխանատվությունը:

Արհեստական բանականության կիրառումը ներկայացնում է տարբեր ռիսկեր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են հանրության վրա: Այս ռիսկերը կախված են հիմնականում ԱԲ զարգացման մակարդակից և մարդկային գործունեությամբ՝ այն, թե ինչ կիրառություն կունենա ԱԲ⁸: Դրանք ներառում են աշխատատեղերի հնարավոր կորուստներ և սոցիալական անկայունություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսները, առողջապահությունը և զվարճանքը, արհեստական բանականության օգտագործումը որպես «զենք», հաշվետվողականության և թափանցիկության բացակայությունը, ակտրիթմական կողմնակալությունը, տվյալների գաղտնիության խախտումները, վիրտուալ սպառնալիքները և կիբեռնական մարտությունները⁹: Մարդկային հասարակության վերաբերյալ ռիսկերը ներառում են արհեստական բանականության ազդեցությունը շուկայական տնտեսության վրա, մարդկանց ռոբոտներով փոխարինման հնարավորությունը, ուղեղի մոդիֆիկացիայի տեխնոլոգիաները, միջազգային տոտալիտար համակարգչային համակարգը, վտանգավոր գիտական առաջընթացը, զլոբալ առողջապահական խնդիրները և ԱԲ կողմից մոլորակը վերահսկելու ներուժը, որոնք կարող են ի հայտ գալ ԱԲ զարգացման տարբեր փուլերում: «Արհեստական բանականության էթիկական քաղաքականության

⁷Cihon P., M.M. Maas, L. Kemp Should artificial intelligence governance be centralised? A. Markham, J. Powles, T. Walsh, A.L. Washington (Eds.), Proceedings of the AAAI/ACM conference on AI, ethics, and society, ACM, New York, NY, USA (2020), pp. 228-234, [10.1145/3375627.3375857](https://doi.org/10.1145/3375627.3375857)

⁸ Zaidan, E., & Ibrahim, I. (2024). AI Governance in a Complex and Rapidly Changing Regulatory Landscape: A Global Perspective. Humanities and Social Sciences Communications, 11. <https://doi.org/10.1057/s41599-024-03560-x>.

⁹ Taeihagh A (2021) Governance of artificial intelligence. Policy Soc 40, 137–157. <https://doi.org/10.1080/14494035.2021.1928377>

լանդշաֆտի քարտեզագրում. խառը մեթոդների վերլուծություն» հոդվածում ուսումնասիրվել է 24 տարբեր երկրներից ծագող արհեստական բանականությանը վերաբերող 57 էթիկական քաղաքականության փաստաթղթեր՝ օգտագործելով հաշվողական տեքստային վերլուծությունների և որակական բովանդակության վերլուծության համադրություն: Հիմնական նպատակը եղել է բացահայտել ԱԲ քաղաքականության փաստաթղթերում ընդհանուր թեմաները և համեմատական վերլուծություն կատարել թե ինչպես են տարբեր կառավարություններ առաջնահերթություն տալիս կարևորագույն հարցերին: Ընդհանուր առմամբ հետազոտվել են տասնինը թեմաներ: Կրկնվող կողավորման գործընթացի միջոցով բացահայտվել են վեց ընդհանուր թեմաներ՝ սկզբունքներ, անձնական տվյալների պաշտպանություն, կառավարության դերեր և պարտականություններ, ընթացակարգային ուղեցույցներ, կառավարման և մոնիթորինգի մեխանիզմներ և իմացաբանական նկատառումներ: Ավելին, հետազոտությունը բացահայտել է արհեստական բանականությանը վերաբերող 31 էթիկական դիլեմա, որոնք նախկինում անտեսվել էին¹⁰:

Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ԱԲ ունի տնտեսական աճը խթանելու զգալի ներուժ: Օրինակ, Համաշխարհային տնտեսական ֆորումի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ակնկալվում է, որ մինչև 2030 թվականը ԱԲ օգտագործումը կբերի մինչև 15,7 տրիլիոն դոլար ներդրմանը համաշխարհային տնտեսության մեջ¹¹: Ավելին, ԱԲ արդեն փոխել է և ապագայում էլ ավելի կփոխի պոտենցիալ աշխատողների վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության ձևերը, առաջ բերելով աշխատանքային ոլորտում մարդու իրավունքների խախտման լրացուցիչ ռիսկեր: Հետևաբար, աշխատողները և գործատուները աշխատողներ վարձելիս ԱԲ օգտագործման իրավական հետևանքների մասով բախվում են տրամաբանական հարցի: Ի վերջո, անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ աշխատանքային հարաբերությունների գլոբալ վերափոխման ենթադրյալ դրական հետևանքների հետ մեկտեղ այն ոլորտներում, որտեղ օգտագործվում են արտադրության նոր տեխնոլոգիաներ, առաջանում են անցանկալի հետևանքներ՝ կապված կապիտալի վերաբաշխման և աշխատողների սոցիալական բևեռացման հետ:

ԱԲ դարաշրջանում աշխատանքային քաղաքականությունը առաջին հերթին պետք է պաշտպանի ավանդական աշխատանքի, այսինքն՝ «մարդկային»

¹⁰ Tahereh, S, Tayebbeh, S, (2024) Mapping Ethical Artificial Intelligence Policy Landscape: A Mixed Method Analysis, Science and Engineering Ethics 30:9, <https://doi.org/10.1007/s11948-024-00472-6>

¹¹ Božić, V. (2019). The Impact of Artificial Intelligence on Developing Digital Economy. J.Sport Industry & Blockchain Tech, 1(1),1-11 <https://doi.org/10.5281/zenodo.12599627>

աշխատուժի իրավունքները¹²: Քանի որ գիտության և տեխնոլոգիայի զարգացումը նախատեսված է մարդկանց օգուտ բերելու, այլ ոչ թե դժվարություններ ստեղծելու համար: Ապագայի աշխատանքային քաղաքականությունը պետք է ծառայի ի նպաստ ռոբոտներով փոխարինված աշխատողների գոյատևման հիմնական իրավունքներին և օգնի հաղթահարել զբաղվածության լճացման հետևանքով առաջացած սոցիալական դժվարությունները: Պատահական չէ, որ Ռոբոտների համար հատուկ իրավական կարգավիճակ սահմանելու մասին բանաձևի դրույթը մեծ քննարկումներ է առաջացրել: «Արհեստական բանականություն» հասկացության ավելի ամբողջական սահմանման համար առավել պատկերավոր է Եվրախորհրդի 2015/2103 (INL) «Ռոբոտաշինության վերաբերյալ քաղաքացիական իրավունքի կանոններ» բանաձևը, որի հիմնական նպատակն է սահմանել ԱԲ դերը և կարգավորել բարձր տեխնոլոգիաների գործածության հետ կապված հարաբերությունները¹³: Բանաձևը ԱԲ սահմանում է որպես «խելացի ռոբոտ»՝ մի քանի բնութագրերով, ինչպիսիք են՝ կենսաբանական իմաստով անշունչ լինելը, փորձի կամ փոխազդեցության միջոցով ինքնուրույն սովորելը, սենսորների միջոցով ինքնավարության ձեռքբերումը և/կամ միջավայրի հետ տվյալների փոխանակումը (փոխկապակցվածություն), որոշակի աստիճանի ֆիզիկական աջակցություն ունենալը և վարքագծային մոդելը միջավայրին հարմարեցնելը:

ԱԲ տեխնոլոգիաների, մասնավորապես՝ գեներատիվ ԱԲ-ի և ինքնավար համակարգերի արագ տարածումը հիմնարար մարտահրավեր է նետել իրավական կառավարման հիմքերին՝ բարձրացնելով կարևոր հարցեր օրենքի գերակայության և կարգավորող շրջանակների՝ իրավական որոշակիություն, հաշվետվողականություն և կիրառելիություն ապահովելու կարողության վերաբերյալ: Մինչդեռ առկա իրավական մեխանիզմների շրջանակը հիմնականում կենտրոնացած է ոլորտային ԱԲ կարգավորումների և համապատասխանության մեխանիզմների վրա. մեծ մասամբ անտեսված է ԱԲ ի ավելի լայն հետևանքները իրավական իշխանության, կառավարման կառուցվածքների և ինստիտուցիոնալ արդարադատության վրա¹⁴:

Եվրոպական հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 21-ին ներկայացրեց ԱԲ կարգավորման վերաբերյալ եզակի և մինչ այժմ առաջին համապարփակ

¹² Poghosyan, S., Manucharyan, M., Martirosyan, G., Azatyan, L., & Asatryan, H. (2024). Leslie matrix matching approach in labor market studies. *Cogent Arts & Humanities*, 11(1). <https://doi.org/10.1080/23311983.2024.2426364>

¹³ Civil Law Rules on Robotics: European Parliament resolution of 16 February 2017. (2015/2103(INL)). (n.d.). <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52017IP0051>

¹⁴ Chung, C. (2025). AI and the Rule and Role of Law: Reshaping Legal Regulatory Frameworks to Address Emerging Challenges. *2025 IEEE International Symposium on Ethics in Engineering, Science, and Technology (ETHICS)*, 1-8. <https://doi.org/10.1109/ethics65148.2025.11098292>.

իրավական առաջարկը՝ այսպես կոչված «Արհեստական բանականության ակտը» (Artificial Intelligence Act, AIA):¹⁵ Այն նպատակ ունի լուծել ԱԲ որոշակի կիրառությունների ռիսկերը՝ դրանք դասակարգելով 4 տարբեր մակարդակների՝ անընդունելի ռիսկ, բարձր ռիսկ, սահմանափակ ռիսկ և նվազագույն ռիսկ¹⁶: ԱԲ արագ զարգացումը հիմնովին փոխում է կիբեռնահաճախորդությունների մեթոդներն ու չափերը և նույնքան լուրջ մարտահրավերներ է առաջացնում իրավական կարգավորման համար: Ընթացիկ օրենսդրությունը առերեսվում է մի շարք բացերի հետ, մասնավորապես՝ հստակ նորմերի և սահմանումների բացակայությունը, որոնք կարգավորում են ԱԲ տեխնոլոգիաների օգտագործումը կիբեռնահաճախորդությունների համատեքստում: Խնդրի օրինակ է այն, որ քրեական օրենսդրությունում բացակայում է «դիպ ֆեյք» (deepfake) կամ «ինքնավար ԱԲ համակարգեր» (autonomous AI systems) տերմինների իրավական սահմանումը¹⁷: Վերջին տասնամյակում կառավարման մեջ ԱԲ ուղղված քաղաքական արձագանքը հիմնականում ներառել է նորմատիվ շրջանակների և սկզբունքների մշակումը, որոնք կառավարություններն ու կազմակերպությունները կարող են հարմարեցնել իրենց սեփական ԱԲ ռազմավարություններին¹⁸: Միավորված Ազգերի Կազմակերպությունը ստեղծել է Բարձր մակարդակի խորհրդատվական մարմին, որի նպատակը ԱԲ միջազգային կառավարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելն է: Այլ համապատասխան միջազգային նախաձեռնություններ առաջարկել են ԱԲ քաղաքականության մեղմ իրավական ռազմավարություններ, այն ընդհանրությամբ, որ բոլորն էլ ընդունել են «մարդակենտրոն» կառավարման մոտեցման տերմինաբանությունը՝ կենտրոնանալով նաև ԱԲ զարգացման տնտեսական արժեքի վրա¹⁹:

• Աշխատանքի ապագայի համար Աշխատանքի միջազգային կազմակերպության հարյուրամյակի հռչակագիրը (2019). խթանում է մարդակենտրոն մոտեցման մշակումը, որը կառուցված է մարդկանց կարողությունների ամրապնդման, աշխատանքի ինստիտուտների ամրապնդման և կայուն, ներառական և կայուն տնտեսական աճի ու արժանապատիվ աշխատանքի խթանման վրա:

¹⁵Ruscheimer, H. (2023). AI as a challenge for legal regulation – the scope of application of the artificial intelligence act proposal. *ERA Forum*, 23, 361 - 376. <https://doi.org/10.1007/s12027-022-00725-6>.

¹⁶ Proposal for a Regulation laying down harmonised rules on artificial intelligence, POLICY AND LEGISLATION, <https://digital-strategy.ec.europa.eu/en/library/proposal-regulation-laying-down-harmonised-rules-artificial-intelligence>

¹⁷ Zverev, V., Bushkov, V., Khrushkov, B., Sarychev, V., Ostaltsev, O., & Prokopovych-Tkachenko, Y. (2025). ARTIFICIAL INTELLIGENCE AND CYBERCRIME: NEW CHALLENGES AND PROSPECTS FOR LEGAL REGULATION. *Contemporary Issues in Artificial Intelligence*. <https://doi.org/10.69635/ciai.2025.11>.

¹⁸ Silva, V. (2022). The Schumpeterian consensus: The new logic of global social policy to face digital transformation. *Journal of Social Policy*, pp.1–17. Available at: <https://doi.org/10.1017/s0047279422000861>.

¹⁹ *International Organisation of Employers*, The Impact of AI on Work and Employment, policy review, June 2024, p.14,

•Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) արհեստական բանականության սկզբունքները (2019). աջակցում է մարդակենտրոն արժեքներին, ինչպիսիք են օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները և ժողովրդավարական արժեքները հարգելը արհեստական բանականության ողջ կյանքի ցիկլի ընթացքում՝ նպատակ ունենալով խթանել ներառական աճը և թափանցիկ արհեստական բանականության զարգացումը:

•Արհեստական բանականության վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջարկությունը (2021). ընդգծում է արհեստական բանականության համակարգերի մարդկային վերահսկողության կարևորությունը, և որ քաղաքականության մշակողները պետք է համագործակցեն մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, արհմիությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ՝ արդար անցման համար:

•G7 Հիդրոսիմայի արհեստական բանականության միջազգային ուղեցույց սկզբունքներ և վարքագծի կանոնագիրք (2023). խթանում է արհեստական բանականության համակարգերի անվտանգ և պատասխանատու զարգացումը՝ ռիսկերի մեղմացման, թափանցիկության, կառավարման, անվտանգության, հետազոտությունների առաջնահերթության սահմանման և ստանդարտների ընդունման միջոցով:

Ընդհանուր առմամբ, ԱԲ տեխնոլոգիաները կարող են լինել կարևոր գործիք բարեկեցության առաջընթացի համար, եթե այն ճիշտ ուղղորդվեն: Այս հանգամանքի կարևորությունը իր աշխատանքում ընդգծել է հետազոտող Ա. Լալան իր «Regulatory Framework for Artificial Intelligence: Ethical and Legal Issues» աշխատանքում՝ որպես հիմնական հետազոտական նպատակ դնելով ուղղորդումը. ուղղորդել ԱԲ պատասխանատու կերպով կիրառմանը և հնարավոր վնասները նվազեցնելուն²⁰:

<<ԱԲ օրենքներ աշխարհի շուրջ>> հետազոտության համաձայն առաջատար երկրները, որոնք ունեն ԱԲ ռազմավարություն և ենթաօրենսդրական ակտեր:

Ադյուսակ 1-ում ներկայացված Ազգային ռազմավարության համար բյուջետային ծախսերի տարեկան գնահատված միջակայքը առավել մեծ են Ֆրանսիայում, Գերմանիայում և Իսպանիայում, չնայած ԱԲ Ազգային ռազմավարությունների և քաղաքականությունների ընդհանուր թիվով Պորտուգալիան գերազանցում է ֆրանսիային, բայց բյուջետային ծախսերով զիջում է: <<ԱԲ օրենքներ աշխարհի շուրջ>> հետազոտության Ամենաշատ ԱԲ օրենքներ ունեցող երկիրը Միացյալ Նահանգներն է, որը 2024 թվականի մարտին հետազոտության անցկացման պահին արդեն ուներ արհեստական բանականության 82 քաղաքականություն և ռազմավարություն:

²⁰ Lala, A. (2025). Regulatory Framework for Artificial Intelligence: Ethical and Legal Issues. *Journal of Law and Regulation Governance*. <https://doi.org/10.57185/jlarg.v3i4.104>.

Ամենաշատ ԱԲ ռազմավարություններ և քաղաքականություններ կիրառող 10 երկրները²¹

Երկրներ	ԱԲ Ազգային ռազմավարությունների և քաղաքականությունների ընդհանուր թիվը	ԱԲ ազգային ռազմավարության անվանումը	Ազգային ռազմավարության համար բյուջետային ծախսերի տարեկան գնահատված միջակայքը, մլն դոլար
ԱՄՆ	82	Գործադիր հրամանագիր ԱԲ անվտանգ, պաշտպանված և հուսալի զարգացման և օգտագործման վերաբերյալ	-
ԵՄ	63	ԱԲ վերաբերյալ համակարգված ծրագիր	500մլն<
Անգլիա	61	Ազգային ԱԲ ռազմավարություն	-
Ավստրալիա	44	Ավստրալիայի ԱԲ գործողությունների ծրագիրը	50-100մլն
Գերմանիա	38	Ազգային ԱԲ ռազմավարություն	100-500մլն
Պորտուգալիա	36	ԱԲ Պորտուգալիա 2030 – ԱԲ ազգային ռազմավարություն	1-5մլն
Թուրքիա	36	Ազգային ԱԲ ռազմավարություն	5-20մլն
Ֆրանսիա	34	Ազգային ԱԲ ռազմավարություն	500մլն<
Հնդկաստան	32	Ազգային ԱԲ ռազմավարություն	20-50մլն
Կոլումբիա	30	Ազգային ԱԲ ռազմավարություն	1-5մլն
Իսպանիա	28	Ազգային ԱԲ ռազմավարություն	100-500մլն

Արհեստական բանականության 82 նախաձեռնություններից 33-ը կառավարման քաղաքականություն են, 25-ը՝ ուղեցույցի և կարգավորման քաղաքականություն, 14-ը՝ արհեստական բանականության խթանման և այլ խրախուսման

²¹ AI LAWS AROUND WORLD, <https://www.aiprm.com/ai-laws-around-the-world/ai-laws-around-world.png>

քաղաքականություն, իսկ 10-ը՝ ֆինանսական աջակցության քաղաքականություն: Հայաստանը 71 երկրների շարքում զբաղեցնում է 60-րդ տեղը, ոլորտին նպաստող ԱԲ Ազգային ռազմավարությունների և քաղաքականությունների ընդհանուր թվով 3 նախաձեռնություն և դասվում է այն երկրների շարքին, որոնք չունեն ազգային ռազմավարություն, մինչդեռ հարևան Թուրքիան 2024 դրությամբ այդ ցուցանիշով զբաղեցնում է 7-րդ տեղը և ի տարբերություն ՀՀ ունի ԱԲ ոլորտին վերաբերող ազգային ռազմավարություն²²:

2025-ի վերջին տվյալներով, առնվազն 40 երկրներ ունեն պաշտոնապես հրապարակված ԱԲ ռազմավարություն²³: Այս ցուցանիշը վերաբերում է միայն պաշտոնապես հրապարակված ծրագրերին: Իրականում շատ երկրներ գտնվում են ԱԲ ռազմավարություններ մշակելու փուլում կամ ունեն գործող օրենսդրական ակտերի ու քաղաքականությունների համախառնություն՝ չհամարվելով լիարժեք «կարգավիճակ ունեցող ռազմավարություններ»: Դեռևս 2021թ-ին Բրուքին ինստիտուտի վերլուծությունները ընդգրկում էին 34 երկրներ, որոնք ներկայացրել էին ազգային ԱԲ ծրագիր կամ պլան²⁴:

Արդյունաբերություն 5.0-ի անցնցում անցման և ԱԲ կիրառման «մարդակենտրոն» մոտեցման համար անհրաժեշտ ենք համարում պետական մակարդակով ԱԲ իրավական կարգավորման մեխանիզմների մշակումը, թափանցիկ ու ներառական հաշվետվողականության համակարգի ձևավորումը քաղաքականությունների մշակման ժամանակ:

Եզրակացություն: ԱԲ իրավական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ ԱԲ կիրառման «մարդակենտրոն» մոտեցումն ու ուղղորդումը պահանջում է համապատասխան ռազմավարության առկայություն: Վերլուծությունը փաստում է, որ առկա իրավական կարգավորումները հաճախ չեն համապատասխանում ԱԲ տեխնոլոգիաների զարգացման տեմպերին. բազմաթիվ երկրներում բացակայում է ԱԲ-ի հստակ իրավական սահմանումը, ինչպես նաև պատասխանատվության և վերահսկողության արդյունավետ մեխանիզմները: Այս իրավիճակը հատկապես խնդրահարույց է աշխատաշուկայի և հանրային կառավարման ոլորտներում, որտեղ ԱԲ համակարգերի կիրառումը կարող է ունենալ անմիջական ազդեցություն մարդու հիմնարար իրավունքների վրա: Հետևաբար, ԱԲ-ի պատասխանատու կիրառումը չի կարող դիտարկվել զուտ տեխնոլոգիական կամ

²² AI LAWS AROUND WORLD, <https://www.aiprm.com/ai-laws-around-the-world/ai-laws-around-world.png>

²³ Տվյալը հիմնված է «40 National AI Strategies» վերապատրաստման վրա, [Global Institute for National Capability, https://www.ginc.org/40-national-ai-strategies-august-2025](https://www.ginc.org/40-national-ai-strategies-august-2025)

²⁴ Samar Fatima, Kevin C. Desouza, Gregory S. Dawson, and James S. Denford, (2021) Analyzing artificial intelligence plans in 34 countries, <https://www.brookings.edu/articles/analyzing-artificial-intelligence-plans-in-34-countries>

տնտեսական հարց, այլ պահանջում է համապարփակ իրավական և քաղաքական մոտեցում: Այս համատեքստում առաջարկվում է պետական ռազմավարության մշակում, որտեղ կներառվեն ԱԲ ներդրման ուղղություններ ըստ ոլորտների՝ հստակ ծրագրերով, բյուջեով, միջազգային համագործակցության հարթակներով: Այս ամենին զուգահեռ պետք է ապահովել նաև համապատասխան օրենսդրաիրավական հիմքերի ստեղծում՝ ԱԲ կիրառման պատասխանատու ու հաշվետվողական օգտագործման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Atabekov, A. (2023). Artificial intelligence in contemporary societies: Legal status and definition, implementation in public sector across various countries. *Social Sciences*, 12, 178. <https://doi.org/10.3390/socsci12030178>
2. Božić, V. (2019). The impact of artificial intelligence on developing digital economy. *Journal of Sport Industry & Blockchain Technology*, 1(1), 1–11. <https://doi.org/10.5281/zenodo.12599627>
3. Cath, C. (2018). Governing artificial intelligence: Ethical, legal and technical opportunities and challenges. *Philosophical Transactions of the Royal Society A: Mathematical, Physical & Engineering Sciences*, 376 (2133), 1–8. <https://doi.org/10.1098/rsta.2018.0080>
4. Chung, C. (2025). AI and the rule and role of law: Reshaping legal regulatory frameworks to address emerging challenges. In 2025 IEEE International Symposium on Ethics in Engineering, Science, and Technology (ETHICS) (pp. 1–8). <https://doi.org/10.1109/ETHICS65148.2025.11098292>
5. Cihon, P., Maas, M. M., & Kemp, L. (2020). Should artificial intelligence governance be centralised? In A. Markham, J. Powles, T. Walsh, & A. L. Washington (Eds.), *Proceedings of the AAAI/ACM Conference on AI, Ethics, and Society* (pp. 228–234). ACM. <https://doi.org/10.1145/3375627.3375857>
6. European Parliament. (2017). Civil law rules on robotics (European Parliament resolution of 16 February 2017, 2015/2103(INL)). <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52017IP0051>
7. Fatima, S., Desouza, K. C., Dawson, G. S., & Denford, J. S. (2021). Analyzing artificial intelligence plans in 34 countries. Brookings Institution. <https://www.brookings.edu/articles/analyzing-artificial-intelligence-plans-in-34-countries>
8. Global Institute for National Capability. (2025). 40 national AI strategies. <https://www.ginc.org/40-national-ai-strategies-august-2025>
9. Huq, A. Z., & Cuéllar, M. F. (2022). Artificially intelligent regulation. *Daedalus*, 151, 330–345.
10. International Organisation of Employers. (2024). The impact of AI on work and employment (Policy review).

11. INRIA. (2021). Why must we make AI more responsible?
<https://www.inria.fr/en/artificial-intelligence-responsible-ethical-regulation>
12. Lala, A. (2025). Regulatory framework for artificial intelligence: Ethical and legal issues. *Journal of Law and Regulation Governance*.
<https://doi.org/10.57185/jlarg.v3i4.104>
13. Leslie, D., Burr, C., Aitken, M., Cows, J., Katell, M., & Briggs, M. (2021). Artificial intelligence, human rights, democracy, and the rule of law: A primer. *SSRN Electronic Journal*. <https://doi.org/10.2139/ssrn.3817999>
14. Moise, A. (2025). Aspects regarding the regulation of artificial intelligence at the European level. *Bulletin of the Transilvania University of Braşov, Series VII: Social Sciences and Law*. <https://doi.org/10.31926/but.ssl.2025.18.67.1.25>
15. Poghosyan, S., Manucharyan, M., Martirosyan, G., Azatyan, L., & Asatryan, H. (2024). Leslie matrix matching approach in labor market studies. *Cogent Arts & Humanities*, 11(1). <https://doi.org/10.1080/23311983.2024.2426364>
16. Ruschemeier, H. (2023). AI as a challenge for legal regulation – The scope of application of the Artificial Intelligence Act proposal. *ERA Forum*, 23, 361–376.
<https://doi.org/10.1007/s12027-022-00725-6>
17. Silva, V. (2022). The Schumpeterian consensus: The new logic of global social policy to face digital transformation. *Journal of Social Policy*, 1–17.
<https://doi.org/10.1017/S0047279422000861>
18. Tahereh, S., & Tayebbeh, S. (2024). Mapping ethical artificial intelligence policy landscape: A mixed method analysis. *Science and Engineering Ethics*, 30, Article 9.
<https://doi.org/10.1007/s11948-024-00472-6>
19. Taeihagh, A. (2021). Governance of artificial intelligence. *Policy and Society*, 40, 137–157. <https://doi.org/10.1080/14494035.2021.1928377>
20. Zaidan, E., & Ibrahim, I. (2024). AI governance in a complex and rapidly changing regulatory landscape: A global perspective. *Humanities and Social Sciences Communications*, 11. <https://doi.org/10.1057/s41599-024-03560-x>
21. Zverev, V., Bushkov, V., Khrushkov, B., Sarychev, V., Ostaltsev, O., & Prokopovych-Tkachenko, Y. (2025). Artificial intelligence and cybercrime: New challenges and prospects for legal regulation. *Contemporary Issues in Artificial Intelligence*.
<https://doi.org/10.69635/ciai.2025.11>

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

ՇՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Համառոտագիր

ԱԲ լայն կիրառումը վերջին տարիներին դարձել են թվային տնտեսության, աշխատաշուկայի և հասարակական հարաբերությունների

խորքային վերափոխումների հիմնական շարժիչ ուժերից մեկը: Միաժամանակ ԱԲ տեխնոլոգիաների կիրառումը առաջացնում է էական իրավական, սոցիալական և էթիկական մարտահրավերներ՝ կապված տվյալների պաշտպանության, ալգորիթմական թափանցիկության, պատասխանատվության և աշխատողների հիմնարար իրավունքների պահպանման հետ, որով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի **արդիականությունը**: Իրականացվել է նորմատիվ իրավական ակտերի, միջազգային կազմակերպությունների (ԱՄԿ, OECD, ՅՈՒՆԵՍԿՕ, G7, Եվրոխորհուրդ) զեկույցների և ռազմավարական փաստաթղթերի կառուցվածքային և համեմատական վերլուծություն: Այդ նպատակով ուսումնասիրվել է ԱԲ կարգավորման միջազգային փորձը, գործող և առաջարկվող իրավական շրջանակները, ինչպես նաև մարդակենտրոն քաղաքական մոտեցումների առանձնահատկությունները:

Հոդվածի **նպատակն է** ուսումնասիրել ԱԲ-ի կիրառման իրավական և քաղաքական մարտահրավերները՝ դիտարկելով ինչպես տնտեսական աճի և արդյունավետության հնարավորությունները, այնպես էլ աշխատողների պաշտպանության և հասարակության սոցիալական կայունության խնդիրները: Այս շրջանակում **խնդիր է** դրվել վեր հանել ԱԲ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում առաջացած իրավական ռիսկերը՝ տվյալների մշակման, ալգորիթմների թափանցիկության և աշխատողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև դիտարկել միջազգային և ազգային մակարդակներում մշակված մարդակենտրոն իրավական և քաղաքական մոտեցումները՝ ԱԲ-ի պատասխանատու և հաշվետվողական կիրառման ապահովման նպատակով:

ԱԲ արդյունավետ և պատասխանատու կիրառման նախապայման է համապարփակ, կանխատեսելի և մարդակենտրոն իրավական կարգավորման ձևավորումը: Պետական մակարդակով ռազմավարության մշակումն ու միջազգային լավագույն փորձի ինտեգրումը կարող են նպաստել ԱԲ տեխնոլոգիաների անվտանգ ու ներառական գործածությանը:

Բանալի բառեր. ԱԲ, իրավական կարգավորում, մարդակենտրոն մոտեցում, աշխատանքային իրավունքներ, ալգորիթմական թափանցիկություն, տվյալների պաշտպանություն

ИСКУССТВЕННЫЙ ИНТЕЛЛЕКТ: ТОЧКИ ЗРЕНИЯ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

ШОГЕР ПОГОСЯН

Аннотация

Широкое использование ИИ в последние годы стало одной из главных движущих сил глубоких трансформаций в цифровой экономике, на рынке труда и в социальных отношениях. В то же время, использование технологий ИИ порождает значительные правовые, социальные и этические проблемы, связанные

с защитой данных, алгоритмической прозрачностью, подотчетностью и защитой основных прав работников, поэтому тема исследования столь **актуальна**. Проведен структурный и сравнительный анализ нормативно-правовых актов, докладов международных организаций (МОТ, ОЭСР, ЮНЕСКО, G7, Еврокомиссия) и стратегических документов. Для этого изучен международный опыт регулирования ИИ, действующие и предлагаемые правовые рамки, а также особенности человекоцентричных политических подходов.

Цель статьи – рассмотреть правовые и политические проблемы применения ИИ, учитывая как возможности для экономического роста и эффективности, так и вопросы защиты прав трудящихся и социальной стабильности общества. В рамках этого была поставлена задача выделить правовые риски, возникающие в связи с использованием технологий ИИ, с точки зрения обработки данных, прозрачности алгоритмов и защиты прав трудящихся, а также рассмотреть ориентированные на человека правовые и политические подходы, разработанные на международном и национальном уровнях для обеспечения ответственного и подотчетного использования ИИ.

Предпосылкой для эффективного и ответственного использования ИИ является формирование всеобъемлющего, предсказуемого и ориентированного на человека правового регулирования. Разработка стратегии на государственном уровне и интеграция передового международного опыта могут способствовать безопасному и инклюзивному использованию технологий ИИ.

Ключевые слова: ИИ, правовое регулирование, человекоцентричный подход, трудовые права, алгоритмическая прозрачность, защита данных

ARTIFICIAL INTELLIGENCE: POINTS OF VIEW OF LEGAL REGULATION

SHOGER POGHOSYAN

Abstract

The widespread adoption of artificial intelligence (AI) in recent years has become one of the key driving forces behind profound transformations in the digital economy, labor markets, and social relations. At the same time, the deployment of AI technologies gives rise to significant legal, social, and ethical challenges related to data protection, algorithmic transparency, accountability, and the protection of workers' fundamental rights, which underscores the relevance of the research topic. The study conducts a structural and comparative analysis of normative legal acts, as well as reports and strategic documents issued by international organizations (ILO, OECD, UNESCO, G7, and the Council of Europe). To this end, international experience in AI regulation, existing and proposed legal frameworks, and the specific features of human-centered policy approaches are examined.

The aim of the article is to explore the legal and policy challenges associated with the application of AI, considering both its potential to foster economic growth and efficiency and the issues of worker protection and social stability. Within this framework, the study seeks to identify the legal risks arising from the use of AI technologies, particularly in terms of data processing, algorithmic transparency, and the protection of workers' rights, and to analyze human-centered legal and policy approaches developed at the international and national levels to ensure the responsible and accountable use of AI.

The effective and responsible deployment of AI requires the establishment of a comprehensive, predictable, and human-centered legal framework. At the state level, the development of strategic policies and the integration of international best practices can contribute to the safe and inclusive use of AI technologies.

Keywords: artificial intelligence, legal regulation, human-centered approach, labor rights, algorithmic transparency, data protection